ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՐՈՍ ԱՆԴՐԱՆԻԿԻ ԾՆՆԴՅԱՆ 125-ԱՄՅԱԿԻՆ

1990 թ. մարտի 6-ին ՀԽՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական կաբինետում տեղի ունեցավ գիտական նստաշրջան՝ նվիրված հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչ, ժողովրդական հերոս Անդրանիկի ծննդյան 125-ամյակին։ Այն բացեց պատմության ինստիտուտի դիրեկտոր, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Հ. Ա. Ավետիսյանը։ Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի ջահակիրներից է ժողովրդական հերոս զորավար Անդրանիկը, ասաց նա։ Իր սխրանքներով անմահացած հերոսի անունն այսօր թևածում է համայն հայկական սրտում ու հոգում, հնչում թե՛ մեծի, թե՛ փոքրի սրտերում, ոգևորում ժողովրդին, սատարում նրան՝ հայրենիքին անմնացորդ ծառայելու վեհ գործում։ Տարիներ շարունակ, գժրնդակ բախտի բերումով ու քմահաճույքով, մեծ հայի և հայրենասերի, հիրավի ժողովրդական հերոսի անունը հայրենիքում մնացել էր ժողովրդի սրտի մի անկյունում, իսկ պաշտոնական շրջաններում ուղեկցվում էր անհարկի որակումներով ու պիտակներով։ Ազգային-ազատագրական շարժման պատմության հերոսական դրվագներով լի մի ամբողջ փուլ փակի և կորստի վտանգի տակ էր։ Անդրանիկի պայծառ անվան վրա, այնուհետև նկատեց Հ. Ա. Ավետիսյանը, ստվեր գցվեց դեռևս 1920-ական թվականների սկզբներին՝ Հայաստանում, Ադրբեջանում և Խորհրդային Միության այլ հանրապետություններում, Մոսկվայում։ Դա արտահայտվեց նաև դիվանագիտական շրջաններում, մասնավորապես ԽՍՀՄ արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինի ելույթներում։ 1924 թ. ապրիլի 28-ին հանդես գալով Մոսկվայի արևելագիտության ինստիտուտում՝ բոլշևիկյան կուսակցության Բաքվի կազմակերպության 25-ամյակին և Ադրբեջանում խորհրդային կարգերի հաստատման 4-ամյակին նվիրված՝ Անդրկովկասի ուսանողության ժողովում, նա ասաց. «Ես հիշում եմ ողբերգական և պաթետիկ նամակների այն երկար շարանը, որ մենք, հատկապես ընկ. Ստալինը, 1918 թ. ստանում էինք ընկ. Շահումյանից, որոնցում լուսաբանվում էր Բաքվի փոքրաթիվ բանակի հերոսական պայքարը մեծ ուժերով հարձակվող Թուրքական բանակի դեմ։ Այնտեղ խոսք էր գնում ոչ միայն Բաքվի բանակի մասին, այլ Բաքվի ուժերի հետ կոոպերացված այլ ուժերի մասին, երբեմն խորթ ուժերի, օրինակ դաշնակցական առաջնորդ Անդրանիկի ուժերի մասին։ Եվ շատերին այնքան էլ պարզ չէր, թե ինչպիսի դեր է խաղում Անդրանիկը միջազգային կոմբինացիաներում։ Ինչ դեր են խաղացել մյուս գործոններն այն ժամանակ ծավալված իրադարձություններում»։ Գ. Չիչերինը փորձում էր բացատրություն տալ նաև Անդրանիկի խաղացած դերին։ «Բրեստ-Լիտովսկի հաշտությունից հետո, երբ Թուրքական բանակը սկսեց հարձակվել Բաթումի, Կարսի, Արդահանի վրա, ապա և հեռու, Թուրքերին դիմադրություն ցույց տվեց առաջին հերթին գեներալ Նազարբեկովը, իսկ նրա բեմահարթակից հեռանալուց հետո պայքարը շարունակեց Անտանտի գործակալ Անդրանիկը։ Անդրանիկը Կովկասից փորձում էր անցնել Ուրմիա՝ Կովկաս շարժվող Դենստերվիլի անգլիական էքսպեդիցիոն չոկատի հետ միանալու, Թուրքական հարձակման ճանապարհը կտրելու համար։ Անդրանիկը մարտ մղեց Խոյի մոտ, բայց Թուրքական զորքերն Ուրմիան ու Թավրիզը գրավեցին Դենստերվիլից շուտ և նրան ստիպեցին նահանջել»։

«Անտանտայի գործակալ», «անգլիական գործակալ», «դաշնակցական առաջնորդ» հասկացությունները կոնցեպտուալ դարձան պատմաբանների և քաղաքագետների համար ու դրվեցին դիտական շրջանառության մեջ և Անդրանիկի պատմությունը «հյուսվեց» նման գործվածքով։ Անդրանիկը որպես դաշնակցական հայտնի գործիչ, գլուխ թոցնող «խմբապետ» պիտակավորվեց նաև 1936 թ., Աղասի Խանչյանին հետմահու քաղաքական գնահատական տալու, նրան նացիոնալիզմի ու դաշնակցությանը հովանավորելու մեջ մեղադրելու ժամանակ։ Դրա հիմքն Արշակ Չոպանյանի 1936 թ. մայիսի 9-ի նամակն էր Փարիզից, որտեղ նա խնդրում էր Հայաստան տեղափոխել իր ժողովրդի «ազնիվ և նվիրյալ ծառա» Անդրանիկի աճյունը։

Ստերեոտիպը գոյատևեց երկար ժամանակ։ Այն ավանդական դարձավ հատկապես Ադրբեջանի պատմաբանների մտայնության մեջ, որոնք սուտն ու կեղծիքը բարձրացրին նոր մակարդակի։ Ոչ անհայտ Զիա Բունիաթովը՝ Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի և Անկարայի ակադեմիայի անդամն ու նրա հետնորդները «թխեցին» նոր «ստեղծա-

գործունեությունները»՝ հիմնովին կեղծելով պատմությունը և Անդրանիկի դերն ազատագրական պայքարում։ Անդրանիկի հակաօսմանյան պայքարը նրանք համարում են նաև հակաադրբեջանական պայքար, որն իբր թե խանդարում է «ժողովուրդների բարեկամությանը»։ Նման մոտեցումն իր կնիքն էր դնում մեր հանրապետությունում ևս։ Պատմաբաններին ստիպում էին լռել, «հաշտվել» վիճակի հետ։ Սակայն, վերակառուցման նոր պայմաններում պատմաբանները հնարավորություն ստացան նորովի մոտենալ արյունալի գալարումների մեջ իմաստավորված մեր պատմության փոշեծածկ էջերին։ Այժմ, շարունակեց Հ. Ա. Ավետիսյանը, խնդիր է դրված սերունդներին վերադարձնել սուլթանական և երիտթուրքական յաթաղանի տակ խոշտանգված հայ դատի պաշտպան երախտավորների պայծառ անունները, նրանց ազգանվեր կերպարը։ Լայն ծավալով և խորությամբ աշխատանք է կատարվում Անդրանիկի կյանքին ու գործին նվիրված փաստաթղթերի և նյութերի ժողովածուի հրատարակման նախապատրաստման ուղղությամբ։ Այդ աշխատանքին մասնակցում են ակադեմիայի պատմության ինստիտուտը, Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղը, արխիվային գլխավոր վարչությունը։ Աշխատանքները մոտենում են ավարտին։ Ժողովածուն կնպաստի Անդրանիկի կերպարն ամբողջության մեջ տեսնելու և պատմության կեղծարարությունը մերկացնելու գործին։ Նախատեսված է նաև հրատարակել ազգային-ազատագրական շարժման տարբեր փորձերին նվիրված աշխատություններ։

«Հայ ազգային-ազատագրական շարժման հերոսը» խորագրով զեկուցման մեջ պատմական գիտությունների դոկտոր Ա. Ս. Համբարյանը խոսեց հայդուկային շարժման առաջացման պայմանների մասին։ Նա ասաց, որ XIX դ. վերջին, հատկապես 80—90-ական թվականներին, Արևմտյան Հայաստանում երևան եկան մի շարք ֆիդայիններ, որոնք կանգնելով արևմտահայության պաշտպանության դիրքերում, պայքար ծավալեցին թուրքական բռնապետության դեմ։ Զեկուցողը հիշատակեց Արաբոյին, Աղբյուր Սերոբին, Արմենակ Ղազարյանին (Հրայր, Ուրվական, Դժոխք), Գևորգ Չաուշին և ուրիշներին։ Հայդուկային շարժման մեջ մեծ դեր խաղաց Անդրանիկը, որն ազատագրական շարժման ասպարեզ մտավ 1890-ական թվականներին և, գործելով Աղբյուր Սերոբի հայդուկային խմբում, Սեմալի ու այլ վայրերի բնակիչներին պաշտպանում էր սուլթանական կոտորածներից։ 1890-ական թվականների վերջերին նա դարձավ հայդուկների տասնապետ, իսկ քիչ ուշ՝ հայդուկապետ և ծավալեց մի շարք հայանպաստ գործեր, որոնցով բարձրացրեց արևմտահայության մարտական ոգին, նպաստեց նրա ազգային գիտակցության վերելքին։ Նշանավոր են նրա գլխավորած Առաքելոց վանքի կռիվը (1902), Սասունի ինքնապաշտպանությունը (1904), սասունցիների դիմադրավումը համիդյան իշխանություններին, որոնք ձգտում էին Սասունը հայաթափ անել։ Այդ պայքարի շնորհիվ սուլթանական կառավարությունը ստիպված եղավ հետ կանգնել իր մտադրությունից, և սասունցիները շարունակեցին բնակվել իրենց լեռնաստանում։ Իր ժողովրդանվեր գործունեությամբ Անդրանիկը հռչակվեց իբրև քաջ, անկախ ու խիզախ հերոս և գովերգվեց հայ գուսանների, բանաստեղծների ու հրապարակախոսների ստեղծագործություններում։

1904 թ. Անդրանիկը հարկադրաբար դուրս եկավ Արևմտյան Հայաստանից, մեկնեց Եվրոպա և հաստատվեց Բուլղարիայի Ֆիլիպե քաղաքում։ Այստեղ նա արեց արևմտահայ ազգային-ազատագրական պայքարի մի շարք ընդհանրացումներ և եկավ այն եզրակացության, որ հայ ժողովրդի փրկության կարևոր պայմաններից մեկն ազգային ուժերի համախմբումն է ու զինումը՝ անկախ բնակության վայրից։ Անշուշտ, նկատեց այնուհետև զեկուցողը, Անդրանիկը գնահատում էր թուրքերի կամ քրդերի հետ համագործակցելը, սուլթանական բռնապետության դեմ ընդհանուր ճակատ կազմելը, սակայն դա համարում էր անհնար, քանի որ այդ ժողովուրդներն իրենց գրաված դիրքերով ու զարգացման մակարդակներով չէին ընկերակցի ստրկացված ու կոտորածներից արնաքամ եղած հայերի հետ։ Անդրանիկը միաժամանակ չխաբվեց երիտթուրքերի խոստումներով, գտնելով որ նրանք ոչ թե հայ ժողովրդի բարեկամներն են, այլ թշնամիները, թերևս ավելի վատը, քան սուլթանը։

Պատմական գիտությունների դոկտոր Հ. Մ. Պողոսյանի զեկուցումը նվիրված էր Անդրանիկի 1914—1917 թթ. գործունեությանը։ Այդ ժամանակաշրջանը, նկատեց զեկուցողը, Անդրանիկի կյանքի ամենահետաքրքրական տարիներն էին։ Բուլղարիայից գալով Թիֆլիս, նա մեկնեց Սալմաստի Փայաջուկ գյուղը և ընդունեց առաջին կամավորական ջոկատի հրամանատարությունը (1914 թ. հոկտեմբեր)։ Երբ սկսվեցին մարտերը Ռուսաստանի ու Թուրքիայի միջև, Անդրանիկի ջոկատն ավելի քան մեկ ամիս կռվում էր թուրքական ու քրդական ուժերի դեմ։ Երբ Վան հասնելուն մնում էր մի քանի տասնյակ կիլոմետր, ստացված հրամանի համաձայն Անդրանիկի ջոկատը եկավ Երևան և գնաց Ավան

գյուղը, ուր սկսվեց ջոկատի վերակառուցումը։ Ապա զեկուցողը կանգ առավ 1914 թ. Դիլ-մանի ճակատամարտում Անդրանիկի գլխավորած ջոկատի սխրանքների վրա։ Ջոկաթը գեներալ Թ. Նազարբեկյանի գիվիզիայի կազմում շախշախիչ հարված հասցրեց Խալիլ փաշայի 12-հազարանոց ուժերին և քրդական ավելի քան 8-հազարանոց ջոկատին։ Այս հաղթանակը շատ օգնեց Վանի պաշտպաններին, քանի որ եթե Խալիլը շախշախվելով արագ չնահանջեր, մեծ վնաս կհասցներ Վանին։ Անդրանիկը հասավ Վան, երբ այն արդեն գրավված էր տեղացիների, կամավորների և ռուսական բանակի կողմից։ Անդրանիկի մյուս սխրանքը ռուսական փոքրաթիվ ուժերի հետ գիշերային գրոհով 1916 թ. Բիթլիսի գրավումն էր։

1916 թ. ցարական կառավարությունը ցրեց կամավորական ջոկատները։ Նրանք կատարել էին իրենց դերը՝ Արևմտյան Հայաստանը գրավված էր։

Պատմական գիտությունների դոկտոր Վ. Ա. Միքայելյանը զեկուցեց «Անդրանիկը 1918—1919 թթ.» թեմայով։ Նա նշեց, որ Անդրանիկի 1918—1919 թթ. գործունեությունն իր արդիական նշանակությամբ ազգային հերոսի երկարամյա գործունեության թերևս ամենից ուշագրավ ժամանակաշրջանն է։ Էրզրումի ողբերգական անկումից հետո Անդրանիկը հայկական առանձին հարվածող զորամասի գլուխն անցած ռազմական գործողություններ ծավալեց նախ Ալեքսանդրապոլի գավառում և Լոռիում, դիմագրավելով Թուրքական օկուպանտների առաջխաղացմանը, ապա Իրանում, Նախիջևանում, Զանգեզուրում և Ղարաբաղում՝ Թուրք-մուսավաթական համատեղ ուժերի ասեքսոնիստական քայլերը ձախողելու և վերջին երեք հայկական մարզերը Հայաստանի կազմում պահելու համար։ Անդրանիկի գործունեությունն այս շրջանում ուղղված էր բոլոր նրանց դեմ, ովքեր չանում էին Հայաստանն անջատել Ռուսաստանից։ Անդրանիկն իրավացիորեն գտնում էր, որ դա ողբերգական ավարտ կունենա հայ ժողովրդի համար, նրան թողնելով միայնակ՝ Թուրք-մուսավաթական համատեղ ուժերի դեմ-հանդիման։ Նախիջևանն ազատագրելուց հետո նա հայկական այդ մարզը հռչակեց խորհրդային և Ս. Շահումյանի միջոցով այդ մասին տեղյակ պահեց ՌԽՍՀ կառավարությանը։ Անդրանիկի զորամասի հաջող գործողությունների շնորհիվ էր, որ Զանգեզուրը պահպանվեց Հայաստանի հանրապետության կազմում և Նժդեհի ջոկատների համար հնարավորություն ստեղծվեց 1919 թ. հաջողությամբ շարունակելու Զանգեզուրի համար մղված պայքարը։

Գիտական նստաշրջանի արդյունքներն ամփոփեց ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Հ. Ա. Ավետիսյանը։